Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025Թ. ՄԱՐՏԻ 5-7-Ը ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Էդուարդ Հակոբյան - ՀՀ ՊԵԿ նախագահ

   Ռաֆայել Գևորգյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

   Կարեն Թամազյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

   Արտեմ Կարապետյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պետ

   Աշոտ Մովսիսյան - ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետ

   Սոսե Ստեփանյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության պետ

   Արամ Պետրոսյան - ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Վրաստան, ք. Թբիլիսի, 2025թ. մարտի 5-7-ը

3. **Հրավիրող կողմը՝**

   Հրավերը ստացվել է Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար Լևան Կակավայի կողմից:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակը հայ-վրացական երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մաքսային ու հարկային ոլորտներում առկա մի շարք հարցերի մասով բարձր մակարդակի պայմանավորվածությունների ձեռքբերումն էր, ինչպես նաև երկու երկրների միջև լավագույն փորձի փոխանակումը:

   Մասնավորապես, ներկայումս Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող՝ հայ-վրացական սահմանային անցման կետերում համատեղ հսկողության մոդելի ներդրման շրջանակում կարևոր է ինչպես համապատասխան անցակետի, այնպես էլ առաջարկվող 3 մոդելներից մեկի ընտրությունը և հետագա աշխատանքների շրջանակի որոշումը: Միաժամանակ, ԵՏՄ շրջանակում նախատեսվող տեղորոշման կապարակնիքների կիրառման համատեքստում Վրաստանի տարածքով իրականացվող բեռնափոխադրումների ժամանակ

կիրառվող էլեկտրոնային կապարակնիքները Վրաստանի տարածքում ճանաչելու հարցի կարևորությունից ելնելով անհրաժեշտ էր բարձր մակարդակի քննարկում՝ համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերելու համար: Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել նաև պայմանավորվածություններ՝ երկու երկրների մաքսային մարմինների միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի բարելավման ուղղությամբ:

Բացի այդ, գործուղման հիմնական նպատակներից էր նաև Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայության ղեկավար Սոսո Ռամիշվիլիի հետ հանդիպման շրջանակում երկու երկրների միջև ֆինանսատնտեսական հանցագործությունների, ապրանքների անօրինական շրջանառության դեմ պայքարին, դրանց կանխման և բացահայտման համար կիրառվող ժամանակակից գործիքակազմերին առնչվող հարցերի քննարկումը, ինչպես նաև կրիպտոակտիվների վերահսկման, կիբեր հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում առկա մարտահրավերների վերհանման նպատակով կողմերի միջև օպերատիվ հաղորդակցության ուղիների ստեղծման, կանոնավոր հանդիպումների կազմակերպման վերաբերյալ հարցերի քննարկումը և նշված ուղղություններով պայմանավորվածությունների ձեռբերումը:

5. Քննարկված թեմաները՝

Քննարկված հիմնական թեմաներն առնչվել են հայ-վրացական սահմանին համատեղ հսկողության անցակետի հայեցակարգի ներդրմանը, երկու երկրների մաքսային մարմինների միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի բարելավմանը, երկու երկրներից մեկի տարածքում կիրառած տեղորոշման էլեկտրոնային կապարակնիքների՝ մյուսի կողմից ճանաչմանը, խաղային ոլորտի հարկմանը, մաքսային մարմինների կողմից ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման գործառույթի ապահովմանը, երկու երկրների միջև ֆինանսատնտեսական հանցագործությունների, ապրանքների անօրինական շրջանառության դեմ պայքարին, հանցագործությունների կանխման և արագ բացահայտման նպատակով կողմերի միջև օպերատիվ հաղորդակցության ուղիների ստեղծմանը, կանոնավոր հանդիպումների կազմակերպման անհրաժեշտությանը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի են ունեցել հանդիպումներ և բանակցություններ՝

- ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության և Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար անձնակազմի միջև՝ Եկամուտների ծառայության ղեկավար Լևան Կակավայի գլխավորությամբ,

- ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանի գլխավորած պատվիրակության և Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայության ղեկավար անձնակազմի միջև՝ Քննչական ծառայության ղեկավար Սոսո Ռամիշվիլիի գլխավորությամբ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝ հայ-վրացական սահմանին համատեղ հսկողության հայեցակարգի ներդրման շրջանակում սահմանային անցակետի ու մոդելի ընտրության մասով, նախանշվել են Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև սահմանային համատեղ անցման կետի ներդրման սկզբունքների մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրման ժամկետները, մաքսային մարմինների միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի բարելավման համար երկու կողմերի միջև ըստ ժամանակացույցի աշխատանքների կազմակերպման ուղղությունները, ինչպես նաև Վրաստանի տարածքով ՀՀ կողմից կիրառված էլեկտրոնային կապարակնիքների փոխճանաչման մասով հետագա աշխատանքները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում հարևան պետությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցությունը, ոլորտային քննարկումների անցկացումը և դրանց արդյունքում անհրաժեշտ պայմանավորվածությունների ձեռքբերումը, մասնավորապես՝ հարկային և մաքսային վարչարարության ոլորտներում առկա նորարարական մեխանիզմների ներդրման, ժամանակակից գործիքակազմերի կիրառման համատեքստում:

Վրաստան իրականացված այցը հնարավորություն տվեց ՀՀ ՊԵԿ պատվիրակությանը մասնակցելու Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության, ինչպես նաև քննչական ծառայության ղեկավար անձնակազմի հետ հանդիպումներին, քննարկել լուծումներ պահանջող ակտուալ հարցերի լայն շրջանակ և ձեռք բերել մի շարք կարևոր պայմանավորվածություններ՝ միտված հարկային և մաքսային վարչարարության բարելավման նպատակով անհրաժեշտ մեթոդների և գործիքների կիրառմանը, գործող պայմանագրերի լիարժեք կիրարկման մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման և բացահայտման ոլորտում առկա մարտահրավերների վերհանման և հաղթահարման ուղիների մշակմանը:

Հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները արձանագրվել են և երկու կողմերի միջև փոխհամաձայնեցումից հետո դրանց մասով կամրագրվեն

գործողությունների իրականացման հստակ ժամկետներ՝ ըստ պատասխանատուների, և սահմանված կարգով կապահովի դրանց կատարումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Էդուարդ Հակոբյան

Ռաֆայել Գևորգյան

Կարեն Թամազյան

Արտեմ Կարապետյան

Աշոտ Մովսիսյան

Սոսե Ստեփանյան

Արամ Պետրոսյան

11.03.2025թ.